էր եկեալ վասն ուրախութեան և չարութեան, այս֊
ինքն՝ Թըլթըլն և Պարմախսուզն, Պունիաթն և Քեօրն։
Եւ երբ զթուղթքն առին բազում ուրախութեամբ
յայտնի տեսողացն և ընդ միմեանս անդ խօսս բանան
և ասեն՝ Կարդալ պարտիմք զբանադրանքս· և ասեն
Այո՛, այո՛· և ոմանք ասեն՝ Զկարէք· և Քեօրն ասէ՝
Ոչ տամք կարդալ զսայ՝ անէծքս և նզովքս յիմ վե֊
րայ եղիցի։ Այսպէս ուրախութեամբ ելեալ գնացին։
Զայս լուեալ մեր՝ գնացաք ի ժամ և նստաք անդ, և
յետ ժամուն ժողովեցան բարեկամք և սիրելիք առ
գաւթոյն եկեղեցոյն· յետ բազում խօսից և ուղար֊
կեցին մարդ առ աթոռակալն մեր՝ թէ տացէ զթուղ֊
թըն զի սմա է եկեալ, տացեն զթուղթն իւր սմա։
Եւ ես Տէրտէրն իմ բազում բան ասացեալ, և վեր֊
ջինն այս եղև թէ Ոչ ընդունիմ զնա բաց, այլ կնքով
կաթողիկոսին առ իս դարձցի։ Եւ ոչ է գտեալ զնա
անդ· և այլ երէց ուղարկեցին առ նա՝ թէ տացէ· և
գտեալ զնա, և նա ինքեար արարեալ թէ Կրկին ետու
ի Բարսեղն· և կրկին մարդ ուղարկեալ առ իրիցունսն՝
զի ոչ կարդայցեն զթուղթն։ Եւ յետ պահու ինչ եկն
Յարութիւն Չէլէպին ի մուֆտոյ, և ասացեալ զիրս
բանին· և յետ պահու ինչ ասացեալ մեզ թէ Գնացէ՛ք
յԱստուածատուր վարդապետն։ Եւ ի հասարակել գի֊
շերոյս ելեալ գնացաք ի Սուրբ Գէորք և Մարտիրոս
վարդապետն ելեալ ընդ մեզ եկեալ, և գիր գրեալ
մեծ վարդապետն (Աստուածատուր) աթոռակալաց և
իշխանաց թէ Գիր է եկեալ, ոչ ոք ունի իշխանութիւն
բանալոյ զնոսա առանց հրամանի մեր։ Եւ մին այլ
Բարսեղին ուղարկեաց թէ Թղթերն ամենայն ի մօտ
իմ պարտիք և ես բացից զնոսա։ Եւ գնացաք յԱս֊
տուածածին եւ Խաչատուր վարդապետն եւս եկն եւ
նստաւ եւ բարեկամք յիշխանաց Գ եկեղեցոյս եկեալ
նստան առ նոքօք և ուղարկեցին զթուղթն, յոր մօտ